ՀԱՅԱՍՏԱՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՊՀ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ.Ռ.ՄԱՐԳՍՅԱՆ՝

ԱՊՀ-ի յոթ տարվա գոյությունը ակնհայտորեն ցույց տվեց բոլոր այն դժվարությունները, որոնք խոչընդոտում են համագործակցության անդամ երկրների միջև միասնական տնտեսական տարածքի ստեղծմանը: Տեղի ունեցավ արտաքին տնտեսական կապերի սրընթաց փլուզում. գրեթե երեք անդամ կրճատվեցին ԱՊՀ անդամ երկրների փոխադարձ ապրանքա-շրջանառության ծավալները:

Դիտարկենք Հայաստանի և Ռուսաստանի միջև արտաքին առևտրի զարգացման դինամիկան:

Ներմուծումը Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն

Տարի	Արժեք (ԱՄՆ դոլ.) մլն	Տեսակարար կշիռ
1993	77,9	30,65%
1994	112,2	28,48%
1995	135,1	20,05%
1996	125,5	14,66%
1997	215,9	24,19%
1998	182,7	20,39%

1993 թվականից ռուսաստանյան արտադրանքի տեսակարար կշիռը Հայաստանի ներմուծման կառուցվածքի մեջ սկսեց աստիճանաբար կրճատվել՝ ամբողջ ներմուծման 30,65 %-ից 1993թ. նվազելով մինչև 14,66%՝ 1996թ.: Սակայն, դրա հետ մեկտեղ, Ռուսաստանից ներմուծվող արտադրանքի բացարձակ մեծությունը շարունակում էր աճել 77,9 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1996-ին մինչև 125,5 մլն ԱՄՆ դոլ.: Հետագայում, 1997-ին տեղի ունեցավ զգալի աշխուժացում, և, որպես հետևանք, Ռուսաստանից ներմուծման ինչպես տեսակարար կշիռը, այնպես էլ բացարձակ մեծությունը կազմեցին համապատասխանաբար 24,19 % և 215,9 մլն ԱՄՆ դոլ: 1998թ. Ռուսաստանից ներմուծումը փոքր-ինչ կրճատվեց 1997թ. համեմատ և կազմեց 182,7 մլն ԱՄՆ դոլ (20,39 %):

Չնայած վերջին տարիներին նկատվող դեպի հեռավոր արտասահմանյան երկրները կողմնորոշվելու միտումին, ներմուծման ոլորտում Ռուսաստանը Հայաստանի համար մնում է ամենագլխավոր գործընկերը:

Հայաստանի Հանրապետություն Ռուսաստանի Դաշնությունից հիմնականում ներմուծվում են (1997թ. տվյալներ)՝

1. *վառելիքահումքային արտադրանք (132.351.000 ԱՄՆ դոլ.)*
2. *մեքենաներ և սարքավորումներ (29.678.000 ԱՄՆ դոլ.)*

3. տրանսպորտային միջոցներ (8.736.000 ԱՄՆ դոլ.)
4. պլաստմասսա, կաուչուկ, ռետին (7.343.200 ԱՄՆ դոլ.)
5. քիմիական արդյունաբերության արտադրանք (5.644.600 ԱՄՆ դոլ.)
6. թուղթ (4.925.000 ԱՄՆ դոլ.):

Արտահանումը Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն

Տարի	Արժեք (ԱՄՆ դոլ.) մլն	Տեսակարար կշիռ
1993	58,5	37,46 %
1994	83,9	38,95 %
1995	90,8	33,5 %
1996	96,1	33,12 %
1997	63,0	27,09 %
1998	39,9	17,87 %

1993 թվականից Հայաստանի արտադրանքի արտահանումը Ռուսաստան աստիճանաբար աճել է և 58,5 մլն ԱՄՆ դոլարից 1993-ին հասել է 1996-ին՝ 96,1 մլն ԱՄՆ դոլ., որը կազմում է Հայաստանի ամբողջ արտահանման 33,12 %-ը: Սակայն արդեն 1997-ին արտահանումը Ռուսաստան նվազեց՝ հասնելով 63 մլն ԱՄՆ դոլ. ցուցանիշին, որը կազմեց ամբողջ արտահանման 27 %-ը: 1998-ին արտահանումը Ռուսաստան կազմեց 39,9 մլն ԱՄՆ դոլ. (17,87 %), որը վկայում է Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառության ոլորտում արտահանման ծավալների աննախադեպ կրճատման մասին: Ռուսաստանի Դաշնությունը, այնուամենայնիվ, այսօր էլ մնում է Հայաստանի արտադրանքի կարևորագույն ներմուծողը:

Ռուսաստան Հայաստանի Հանրապետությունից հիմնականում ներմուծվում են (1997թ. տվյալներ)՝

1. պատրաստի սննդի արտադրանք (20.196.900 ԱՄՆ դոլ.),
2. մեքենաներ և սարքավորումներ (14.277.000 ԱՄՆ դոլ.),
3. տեքստիլ արտադրանք (4.443.000 ԱՄՆ դոլ.),
4. կահույք, խաղալիքներ (3.072.000 ԱՄՆ դոլ.),
5. թանկարժեք քարեր և մետաղներ (3.010.000 ԱՄՆ դոլ.):

ԱՊՀ երկրներից Ռուսաստանում առավել նկատելի է արտադրողների՝ դեպի հեռավոր արտասահմանյան երկրներ վերակողմնորոշվելու միտումը, որը տեղի է ունենում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ տնտեսական կապերի կրճատման հաշվին: Նախ, դա կարելի է բացատրել ռուսաստանյան արտադրողների վստահությամբ՝ հեռավոր արտասահմանյան գործընկերների վճարունակության նկատմամբ: Ամուր փոխարկելի արտարժույթով հասույթ ստանալու հնարավորությունը, մի կողմից, և չվճարումների ու պարտքերի հիմնահարցը, որը գոյություն ունի ԱՊՀ գրեթե բոլոր երկրներում, մյուս կողմից, այդ արտադրողներին դրդում է փնտրել նոր շուկաներ:

Հիշյալ ժամանակահատվածում թեև համագործակցության երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները կտրուկ նվազում են, այնուամենայնիվ, ԱՊՀ երկրների միջև տնտեսական ինտեգրացիայի անհնարինության

մասին կարծիքները դեռևս վաղաժամ են: ԱՊՀ երկրների միջև (և առաջին հերթին Ռուսաստանի և նրա գործընկերների միջև) պահպանվում է խորը տնտեսական փոխկախվածություն, որը չի կարելի անտեսել: Չնայած որ Ռուսաստանի տարածքում է կենտրոնացված նախկին ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի 80 %-ից ավելին, առանց ԱՊՀ երկրների հետ ինտեգրացիայի և կոոպերացման, ՌԴ-ն կարող է արտադրել ռազմական արտադրանքի միայն 17 %-ը: Այսպիսով, Ռուսաստանի համար ԱՊՀ երկրների ձեռնարկությունների հետ կոոպերացումը, երկրի անվտանգության ապահովման առումով, ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև ռազմատեխնիկական նշանակություն: Բացի դրանից, գոյություն ունեցող տվյալների համաձայն, ԱՊՀ երկրների գործընկերների հետ փոխազդեցության զարգացումից և կոոպերացումից է կախված Ռուսաստանի տնտեսության մոտ 102 ճյուղերի զարգացումը:

Այսօր ԱՊՀ երկրների մեծ մասը գիտակցում է, որ դեպի արևմուտք կողմնորոշումը (որտեղ նրանց արտադրանքը, բացառությամբ մի խումբ հումքային ապրանքատեսակների, պահանջարկ չունի) կարող է բերել այս երկրների տնտեսությունների կառուցվածքի հետագա վատթարացմանը և դեգրադացիայի, դիտատար ոլորտների քայքայմանը:

ԱՊՀ շրջանակներում տնտեսական համագործակցության հետագա զարգացման մեջ առաջնահերթ նշանակություն ունի Ռուսաստանի դիրքը այս հարցի շուրջ՝ նրան բաժին է ընկնում ամբողջ ԱՊՀ տնտեսական ներուժի 70 %-ը: Առևտրատնտեսական հարաբերությունների կրճատմանը զուգընթաց, Ռուսաստանը մնում է Հայաստանի համար (ինչպես նաև ԱՊՀ շատ երկրների համար) ամենագլխավոր առևտրային գործընկերը: ԱՊՀ երկրները իրենց արտադրանքով անհամաձայնեցված կերպով դուրս գալով արտաքին շուկաներ՝ սկսեցին մրցակցել միմյանց հետ՝ ի վնաս իրենց: Դրա հետևանքով, ըստ գների և շուկայի կոնյունկտուրայի հետազոտման կենտրոնի, 1996 – 1997թթ. ժամանակահատվածում նրանք միասին վերցրած կորցրեցին մոտ 25 մլրդ ԱՄՆ դոլ.: Փոխադարձ տնտեսական կապերի կրճատման պատճառները բազմազան են: Անկասկած, դրանցից կարևորագույններից է ԱՊՀ ողջ տարածքում տեղի ունեցող խորը տնտեսական ճգնաժամը:

Տնտեսական կապերի աշխուժացմանը չի նպաստում նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների ճնշման ներքո անցկացվող կոշտ դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունը, որը ծանր կացության մեջ է դնում բազմաթիվ ձեռնարկությունների: Նկատվում է նաև Արևմուտքի (որը ձգտում է կասեցնել Ռուսասանի դիրքերի ուժեղացումը տարածաշրջանում) հակազդեցությունը ԱՊՀ-ի՝ դեռևս թույլ միավորիչ միտումներին: Բարձր զարգացած երկրների հզոր ճնշման պայմաններում հստակորեն զգացվում է «միասնական ճակատով» հանդես գալու անհրաժեշտությունը:

ԱՊՀ-ի միջև կապերի ամրացումը, այդ թվում նաև Հայաստան – Ռուսաստան տնտեսական կապերը, լրջորեն խոչընդոտվում են Ռուսաստանի ղեկավար շրջաններում այդ երկրների վերաբերյալ որոշակի և նպատակաուղղված քաղաքականության բացակայության պատճառով: Այդպիսի քաղաքականության ձևավորման վրա ազդեցություն են գործում տարբեր տնտեսական և ֆինանսական խմբավորումներ: Եթե վերամշակող ոլորտները, նախ և առաջ մեքենաշինությունը, սերտորեն կապված են ԱՊՀ գործընկերների հետ և շահագրգռված են այս երկրների հետ կապերի խորացմամբ, ապա որոշակի այլ խմբեր, որոնք շեշտը դնում են արևմտյան երկրներից ներմուծման և փոխարինը

ռուսական հումքի և վառելիքի արտահանման վրա, հանդես են գալիս ԱՊՀ-ի հետ տնտեսական ինտեգրացման գաղափարի դեմ: Ինտեգրացիոն կուրսին դեմ են նաև արմատական բարեփոխիչները, որոնք դա արգելք են համարում Ռուսաստանի շուկայական տնտեսությանը անցնելու գործընթացին:

Գոյություն ունեն երկու կարևորագույն չափանիշ, որ պայմանավորում են Հայաստանի Հանրապետության համար Ռուսաստանի հետ փոխադարձ տնտեսական կապերի խորացման առաջնայնությունը: Առաջինը հողային ռեսուրսների սղությունն է և, որպես հետևանք, հանքային ու մթերային հումքի շատ տեսակների բացակայությունը, որն անհրաժեշտ է բնակչության բնականոն կենսագործունեության ապահովման ու հասարակական արտադրության օպտիմալ կազմակերպման համար: Երկրորդ չափանիշը ներքին շուկայի սահմանափակությունն է, որը այսպես թե այնպես առաջ է քաշում արտաքին իրացման շուկաների ձեռք բերման պահանջը:

Վերջին տարիներին Հայաստանի ձեռնարկությունները աստիճանաբար լքում են իրենց հիմնական առևտրատնտեսական գործընկերոջ՝ Ռուսաստանի շուկաները: Հայաստանի արտադրանքի մեծ մասը (հիմնականում մեքենաշինություն, էլեկտրոնիկա) իրացվում էր Ռուսաստանում: Այսօր ռուսական շուկաները հագեցած են տվյալ ոլորտներում աշխարհի առաջատար ֆիրմաների արտադրանքով: Այս փաստը լուրջ արգելք է հայկական արտադրանքի իրացման ճանապարհին: Հայաստանի և Ռուսաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալների կրճատման օբյեկտիվ գործոններից մեկը հաղորդակցության ուղիների հիմնահարցն է: Փոխադրումների հետ կապված դժվարությունների պատճառով Հայաստանի բազմաթիվ ձեռնարկություններ փաստորեն զրկվեցին իրենց ռուսաստանյան իրացման շուկաներից: Այնուամենայնիվ, եթե հայկական արտադրանքը իր ներկայիս տեխնոլոգիական զարգացման մակարդակով չի իրացվում ռուսական հսկայական շուկայում, ապա առավել դժվար խնդիր կդառնա այդ արտադրանքով այլ շուկաներ թափանցելը:

Վերջին տարիներին ԱՊՀ շրջանակներում կնքվեցին մի շարք պայմանագրեր, ստորագրվեցին տնտեսական միության ստեղծման մասին պայմանագիրը, ազատ առևտրային գոտու մասին համաձայնագիրը, ԱՊՀ երկրների միջև վճարային միության համաձայնագիրը, մի շարք միջկառավարական երկկողմանի առևտրատնտեսական պայմանագրեր: Սակայն դրանցից շատերը այդպես էլ չիրագործվեցին: Փաստորեն անհաջողության է մատնվում ոչ թե համագործակցությունը, այլ վերջին տարիներին ԱՊՀ երկրների միջև համագործակցության կազմակերպման ընդգավառում տիրող մոտեցումները: Ի սկզբանե ընտրվեց այդ համագործակցության կազմակերպման «վերևից» թելադրված ձևը, որը չի համապատասխանում ներկայիս շուկայական տնտեսությանն անցման պայմաններին: Այժմ արտաքին տնտեսական կապերի համակարգում «ծանրության կենտրոնը» տեղաշարժվել է դեպի տնտեսավարող սուբյեկտները: Անհրաժեշտ է այս ձեռնարկատիրական կառույցները դարձնել մեր երկրների միջև տնտեսական մերձեցման շարժիչ գործոն:

Հետագա տնտեսական քաղաքականությունը մշակելիս հիմնական շեշտը պետք է դնել նոր ինտեգրացիոն ձևերի ստեղծման վրա: Այս առումով շատ մեծ նշանակություն ունի մեր երկրների միջև ֆինանսաարդյունաբերական խմբերի, բազմազգ կորպորացիաների և համատեղ ձեռնարկությունների ստեղծումը: Այս կառույցները կարող են ապահովել միջհանրապետական կապերի վերականգնումը նոր շուկայական պայմաններում: Միավորելով տարբեր երկրներից միմյանց հետ փոխկապակցված ձեռնարկությունները՝ բազմազգ կառույցները

խորացնում են այդ կապերը սեփականության հարաբերություններով՝ ստեղծելով միասնական տնտեսական շահագրգռվածություն:

Դա առավել կարևոր նշանակություն ունի, քանի որ կառավարության կողմից թղթի վրա ստորագրված պայմանագրերը հաճախ չեն համապատասխանում ձեռնարկության շահերին: Բազմազգ կորպորացիաների շրջանակներում գործընկեր երկրների միջև տեղի է ունենում տնտեսական պայմանների հավասարեցում, առանց որի անհնար է ինտեգրացիոն գործընթացի զարգացումը: ԱՊՀ երկրներում վերջին տարիներին նկատվում է բազմազգ տնտեսվարող կառույցների թվի աճ: Մոտ ապագայում այդպիսի կառույցներում կարող է ներգրավվել ԱՊՀ երկրների տնտեսական և ֆինանսական ներուժի զգալի մասը: Միայն վառելիքաէներգետիկ համալիրում ստեղծվել են արդեն մի քանի տասնյակ կորպորացիաներ: Առավել կարևոր նշանակություն ունի միջպետական կորպորացիաների ու բազմազգ կառույցների ձևավորումը մեքենաշինության ճյուղերում, որը արդյունաբերության զարգացման հեռանկարների տեսանկյունից ամենագլխավոր տեղն է զբաղեցնում:

1998-ի մարտին ԱՊՀ երկրների կառավարությունների խորհրդի նիստում հաստատվեց Բազմազգ կորպորացիաների մասին կոնվենցիան, որով մասնավորապես սահմանվում են բազմազգ կորպորացիաների ստեղծման ու գրանցման կարգը, պետական խթանումն ու աջակցությունը և այլն:

1999-ի մայիսին ստեղծվեց Հայ-Մոսկովյան առևտրաֆինանսական կազմակերպությունը, որն աջակցելու է Հայաստանի Հանրապետության ու Մոսկվայի կառավարությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում համատեղ ինվեստիցիոն ծրագրերի իրականացմանը: Առաջին նախագիծը պետք է լինի Մոսկվայում «Արարատ» հայկական կոնյակի գործարանի համալիրի շինարարության ավարտը:

Արտաքին տնտեսական կապերի ոլորտում Հայաստանի կարևորագույն հիմնահարցերից մեկը իր հիմնական տնտեսական գործընկերոջ՝ Ռուսաստանի շուկաները չկորցնելն է. դրանից է կախված հայրենական վերամշակող արդյունաբերության արտադրանքի իրացումը: Ներկա բարդ և փոխկապակցված աշխարհում լիակատար սուվերենացումը չի կարող համաձարման ծառայել բոլոր չարիքների դեմ: Գոյությունը պահպանելու համար պետք է ունենալ կամ ստրատեգիական բնական ռեսուրսներ, կամ առաջավոր գիտատեխնիկական ու արտադրական ներուժ: Գիտատեխնիկական ներուժի հետագա քայքայումը կասեցնելու համար հարկավոր է ջանքեր գործադրել տնտեսական ինտեգրացիայի խորացման ուղղությամբ:

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ АРМЕНИЯ – РОССИЯ В УСЛОВИЯХ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ СТРАН СНГ

Г.Р. САРКИСЯН

Резюме

Семь лет существования СНГ со всей очевидностью показали те трудности, которые встают на пути экономической интеграции бывших союзных республик. Несмотря на резкое снижение объемов внешнеторгового оборота между странами СНГ, Россия остается

важнейшим для Армении (как и для большинства стран СНГ) экономическим партнером. Переориентация российских производителей на рынки Дальнего Зарубежья объясняется реальной возможностью получить выручку в свободно конвертируемой валюте и установить стабильные связи с развитыми в области НТР странами.

Главной проблемой остается непонимание роли рыночного механизма. В настоящих условиях управление внешнеэкономическими связями должно проводиться на уровне непосредственно хозяйствующих субъектов. Здесь особо следует отметить роль финансово-промышленных групп, совместных предприятий, ТНК, которые могут сыграть решающую роль в процессе экономической интеграции стран СНГ.